

ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՓԱՅՏԱՐՎԵՍԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ

Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ
ԳԴՂ թանգարանի ֆոնդապահ, դասախոս

Մշակութային տեղական առանձնահատկություններով աչքի ընկնող Սևանի ավազանի ուշ բրոնզի դարում, այլ արհեստների ու արվեստների հետ, մեծ տեղ է հատկացվում փայտագործությանը, միաժամանակ դրա գեղարվեստական զարդարմանը, պատկերագրերով բազմահարուստ զարդաձևերին, որոնց մի մասը պաշտամունքային նշանակության խորհրդանշներ և եզակի հորինվածքներ են:

Առանձին ուսումնասիրության նյութ են այդ դարաշրջանի փայտարվեստի իրերը և հատկապես սայլերը, որոնց քանդակե զարդանախշերը մի ուրույն խումբ են կազմում տվյալ ժամանակաշրջանի զարդարվեստում, բացահայտում մարդկային միտքը և պատկերացումները հավատալիքների մասին:

Փայտագործության զարգացմանը նպաստել է այն հանգամանքը, որ բրոնզի դարում Սևանի ավազանը շրջափակող լեռնափեշերը պատված են եղել անտառներով, ինչի մասին վկայում են շրջակա բնակավայրերից գտնված նյութերը և անտառային կենդանիների մնացորդները¹: Սևանա լճի ցամաքած տարածքներից ավելի հաճախակի են գտնվել եղջերուի եղջյուրներ, ինչը խոսում է անտառոտ բնամիջավայրում դրա գոյության մասին, ինչպես նաև կենդանական այլ մնացորդների²:

Սևանա լճի Արեգունյան ափը վաղ անցյալում պատված է եղել խիտ անտառներով, և դրա բուսապատ մնացորդներից ժամանակին կարելի էր նշնարել լեռնաշրայի ձորերում, ուր իմանականում գերակշիռ է եղել կաղնին: Իսկ Զկալովկա գյուղի շրջակայքում գերակշոել են թեղին, տիսը (կարմիր փայտ): Այս ծառատեսակներն ունեն բավականին բարձր տեխնիկական հատկություններ, որն էլ պայմանավորում է դրանց լայն կիրառումը: Փայտի առկայությունը մեծ չափով նպաստել է տեխնիկայի զարգացմանը: Բրոնզի դարաշրջանում Սևանի ավազանի տեղաբնակները տիրապետել են փայտի տեխնիկական հատկություններին և տարբեր ծառատեսակների փայտից պատրաստել տարբեր առարկաներ, ինչը նպաստել է փայտագործության զարգացմանը:

Կերոկիշյալ ծառատեսակներից թեղին աչքի է ընկնում իր ամրությամբ և կայունությամբ, իսկ կաղնին ունի իր առանձնահատուկ տեղը Հայոց կենցաղում, քանզի կենցաղային առարկաները և գործիքները պահպատճենվել են այդ փայտատեսակից: Տիսը կամ կարմիր փայտն ունի հղկվելու ունակություն և կիրառվել է նուրբ առարկաներ պատրաստելիս:

1956-57թ. Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական արշավա-

¹ Ավետյան Վ. Վ., Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Երևան, 2003, էջ 6: *Մեջլումյան Ս. Կ.*, Պալեօֆայնա էպօխի էնեոլիտ, երուսալիմական գործիքները պահպատճենվել են այդ փայտատեսակից: Տիսը կամ կարմիր փայտն ունի հղկվելու ունակություն և կիրառվել է նուրբ առարկաներ պատրաստելիս:

² Քեշիշյան Մ. Ս., Լճաշենի ուշ բրոնզեդարյան սայլերի նախազարդներ.- Գարուն, 2005, N 9, էջ 62-64:

խումբը Յ. Մնացականյանի ղեկավարությամբ Լճաշեն գյուղի տարածքում կուրգանների պեղումներից հայտնաբերում է բավականին հետաքրքիր կառուցվածքով երկանիվ և քառանիվ սայլեր:

Յ. Մնացականյանի կողմից Վ. Փալանջյանին ուսումնասիրության համձնված երեք սայլերի տարրեր մասերից վերցված 27 փայտի կտորների հետազոտությունից պարզվել է, որ Լճաշենի ուշ բրոնզեդարյան դամբարաններում հայտնաբերված սայլերը պատրաստվել են բաղձրորակ ծառատեսակներից, ընդ որում սայլերի տարրեր մասերը պատրաստվել են տարրեր նմուշի փայտատեսակներից, հաշվի առնելով դրանց տեխնիկական հատկությունները (օրինակ, անիվները պատրաստվել են թեղու փայտից, սռնին, առնող՝ կաղնու, ծածկը՝ տիսից)³:

Փայտե իրերն ապացուցում են, որ Սևանի ավագանի բնիկները դեռևս հնագույն ժամանակներում գնահատել են այդ ծառատեսակների տեխնիկական հատկանիշները և լայնորեն օգտագործել իրենց կենցաղում: Այն, որ մարդը բրոնզի դարաշրջանում լավ է տիրապետել փայտե իրերի պատրաստման միջոցներին՝ որպես «իրեղեն վկաներ» փաստում են Սևանի ավագանից հայտնաբերված փայտե սայլերը և ռազմակառքները: Փայտամշակումը և հատկապես սայլերի պատրաստումը Սևանի ավագանում սկսել է զարգացում ապել դեռևս միջին բրոնզի դարաշրջանում⁴: Նախքան Յ. Մնացականյանի հնագիտական արշավախմբի կողմից Սևանի ավագանում (Լճաշեն) սայլերի հայտնաբերումը, դեռևս XX դարասկզբին ե. Հալայանը Աղիաման գյուղի (Ներկայիս՝ Գետաշեն) Դեմեր կոչվող վայրում պեղել էր մի դամբարան, որից հայտնաբերել էր բարձրարվեստ փորագրությամբ զարդարված եռամիվ «իշխանական սայլ»⁵: Քանդակագործ Վարդիգույանի կողմից մասսամբ վերականգնված այս սայլի զարդանախշերը նման են լճաշենյան սայլերի նախշերին, ինչը մեկ անգամ ևս փաստում է նմանօրինակ նախշերի՝ Սևանի ավագանում լայնորեն տարածված լինելու մասին: Չուգահեռելով սայլերի զարդանախշերը, նկատում ենք, որ փայտարվեստի վրա կիրառելի և սիրված մոտիվ էր պարույրը, հոսող պարույրազարդը կամ գալարազարդը՝ իրենց խորհրդաբանությամբ հանդերձ, վարդյակը (վարդազարդ), որոնք հիմնականում իրենց կոմպոզիցիոն համարդումը գտնել են եռամկյունների կամ գծազարդերի, քառակուսիների միջոցով և դրանց հետ: Նմանը առկա է նաև լճաշենյան սայլերի վրա, ինչը մարդկային մեկ դարաշրջանի և տարածաշրջանի մտածողության արդյունք է: Ուշ բրոնզի դարի սայլերը՝ զարդարման արվեստով, կատարելագործված ծե-

³ **Պալանչյան Յ.**, Դերեվանիե պարունակությունը սևանյան գյուղի տարածումը Արմ. ССР.- Աշխատություններ ՀՊՊԹ, Երևան, 1959, N 5, էջ 259-269:

⁴ **Ավետյան Կ.** Կ., Փայտամշակումը Սևանի ավագանում միջին բրոնզի դարում.- Պատմաբանասիրական հանդես /այսուհետև՝ ՊԲՀ/, 1999, N 2-3, էջ 232-240: **Նույնի**, Սևանյան սայլերը.- Թեզիսներ Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասսիրանատների, հայցողների և գիտաշխատողների 48-րդ գիտաժողովի գեկուցումների, Երևան, 1998, էջ 219: **Մնացականյան Յ. Յ.**, Լճաշենի տասնիններորդ դիակառքը.- Սովետական Հայաստան, 1964, N 4, էջ 34-35:

⁵ **Մելիք-Փաշայան Կ.** Կ., Երվանդ Հալայան (Ծննդյան 100-ամյակի առթիվ).- ՊԲՀ, 1964, N 3, էջ 36-37: **Հալայան Երվ.**, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 194-198, նկ. 194-196:

րով են, ինքնատիպ թե՝ կառուցվածքով և զարդեղանակով, թե՝ զարդարվեստով և պատկերագրական առանձնահատկություններով (Լճաշենի դ 9, դ 11 դամբարանաբլուր): Մասնագետներից շատերի կարծիքով լճաշենյան սայլերի փորագրանախչը զարդերն ունեն խորհրդանշական, հմայական բնույթ⁶:

Փայտարկեստում առկա զարդանախշային միավորներից տեսակավորվել են հետևյալները. **հոսող պարույր, պարույրանախչ, շրջանաձև պարույր, վարդյակ, ծաղկած խաչ կամ աստղածաղիկ, եղևնաձև զիգզագանախչ, եղևնատերև շարան, հերթական շարվածքով գծազարդ, երկճյուղ գալարազարդ, եռանկյունանախշերի զարդագոտու հորինվածք, երկճյուղ կեռիկանախչ՝ երկրաչափական գծերի հորինվածքով, երկրաչափական պատկերներով /կիսաշրջան, եռանկյուն/ կազմված նախշագոտի, եղջերապատկեր, խաչվող գծերից և եռանկյունանախշերով կազմված խաչվարդ, անհիմք եռանկյունանախչ, ցանցանախչ, եռանկյունում ներգծված պարույրանախչ, եռանկյունանախշերի և հոսող գալարազարդի համադրմամբ կազմված նախչ, գծերից և ցանցերից կազմված ուղղանկյունաձև նախշատարրի միավոր:**

Փաստ է, որ զարդանախշման արվեստը կիրառվել է ոչ միայն խեցեգործության և մետաղյա իրերի ծևավորման ժամանակ, այլև դրա գործածությունը ակնհայտ է փայտե իրերում, որտեղ նույնական իշխում են կենդանական, երկրաչափական, բուսական և այլ զարդանախշերը կամ դրանց գուգակցմամբ ստեղծված հորինվածքային խորհրդաբանությամբ հարուստ պատկերաբանդակները: Լճաշենյան սայլի քանդակները նույն են ու գեղեցիկ: Դրանցում կան անվերջ կրկնվող սպիրալներ (գալար), եղևնատերև շարաններ, իրար մեջ առած գծիկներ և սրտաձև պատկերներից ստեղծված վարդյակներ:

Լճաշենի N 9 դամբարանից գտնվել է կամարաձև ծածկով քառանիվ սայլ (կամ դիասայլ⁷), որի թափքի առջևի և հետևի տախտակները զարդարված են նույր վարպետությամբ և ճաշակով կատարված հարուստ զարդանախշերով⁸(Նկ. 1):

⁶ **Թումանյան Գ.**, Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան հայաստանում.- ՊԲՀ, 2007, N 1, էջ 150: **Ավագյան Կ.**, Փայտի փորագրությունը և խորհրդանշական պատկերագրությունը հին հայաստանում.- Լրաբեր հասարակական գիտությունների /այսուհետև/ ԼՀԳ, 1987, N 2, էջ 75:

⁷ **Ավագյան Կ.**, նշվ. աշխ., էջ 75:


⁸ **Մոռականյան Ա. Օ.**, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан.- СА, 1960, N 2, с. 139, рис. 1.




Նկ. 1. Լճաշենի N 9 դամբարանի սայլի վերակազմությունը

Սայլի թափքի առջևի տախտակը բաղկացած է չորս մասից և իրար են ամբացվել փայտե շիպերով (սեպերով): Տախտակի վրա ռելիեֆ փորագրված են միանման և միաչափ, հավասար 12 շարք շարվածքով չընդհատվող ալիք պարույրազարդեր կամ գալարազարդեր: Մեր կարծիքով, վերջինս կապված է ջրի պաշտանունքի կամ անընդհատ հավերժական շարժման մեջ գտնվող արևի ու երկրի հետ: Գալարազարդի կիրառումը փայտարվեստում, ինչպես նաև մետաղական և խեցեղեն արվեստում, փաստում է Յայկական լեռնաշխարհում դրա ավանդական կիրառման ամբողջականության մասին՝ որպես դեկորատիվ, կիրառական արվեստի վառ և ինքնատիպ դրսերում: Կենտրոնում իրար հավասար քառակուսիների մեջ (որոնք բաժանված են հորիզոնական անցնող վերին և ներքին պարույրներից սկիզբ առնող ուղղահայաց փոքրիկ հոսող պարույրազարդով) շրջանակում առնված են վարոյակներ հիշեցնող երկու զարդանախշեր կամ «**ծաղկած խաչեր**», «**աստղածաղիկ**»: Վերջինս հիշեցնում է նաև հավերժության խորհրդանշը և նման է կեռխաչի, որի պաշտանունքի մասին են վկայում Սևանի ավազանից հայտնաբերված տարատեսակ առարկաների նախշերը, ինչպես նաև Գեղանա և Վարդենիսի լեռների ժայռապատկերներում հաճախ համիլիպոր արևի պաշտամունքին նվիրված պատկերները: Յիշենք, որ կեռխաչը խորհրդանշել է արև, կրակ, կայծակ և կյանք, պտղաբերություն: Սակայն, աստղածաղիկը սովորաբար գործածական է եղել նաև միջնադարյան հայկական գորգարվեստում՝ խորհրդանշելով կենաց ծառը⁹: Այս դեպքում, բրոնզեդարյան սայլի տախտակը կարելի է ընդունել որպես այսպես կոչված «փայտե գորգ», որին տրվել է նմանատիպ ոճավորված զարդարանք, ինչը հազարամյակներ հետո էլ պահպանել է իր կիրառական նշանակությունը (**Նկ. 2, ա**):

⁹ Դավթյան Ս. Ս., Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Ե., 1981, էջ 130:



ա



բ

Նկ. 2

ա. Յոսող պարույրանախշի և վարդյակների քանդակները N 9 դամբարանի սայլի վրա;
բ. Սայլի թափքի ետնամասի փորագրազարդը

Սայլի թափքի տախտակների նախշերի քառակուսու անկյուններում տեղադրված են չորս պարույրներ, որոնց նմանը մենք հանդիպում ենք Յայաստանի տարածքից հայտնաբերված վաղ բրոնզի դարաշրջանի խնցեգործության նմուշներում (Լորուտ, Կառնուտ, Շենգավիթ, Քյուլ-թափա): Այս զարդանախշը իմաստաբանորեն արտահայտում է արևը անդադար պտույտի մեջ՝ երկրի չորս ծայրերում¹⁰: Սայլի հետևի տախտակը նույնական համապատասխանաբար բաղկացած է չորս մասերից և ամրացված փայտե շիպերով: Ընդհանուր տախտակների կենտրոնական մասով անցնում է լայն շերտով արված երկրաչափական զարդանախշ գոտի, որը հիշեցնում է եղևնազարդ: Վերջինս մեծ տեղ է գրավում Յայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան զարդարվեստի տարրեր բնագավառներում: Կենտրոնական ուղղահայաց գոտուն անկյունաձև հատում են երկու հաստ եղևնազարդ անկյունագիծ գոտիները: Վերջիններս էլ հիմք և հնարավորություն են տվել փայտագործ վարպետին ընդհանուր պատկերը լրացնել այլ զարդանախշերով: Եղևնազարդը տարածված է եղել նաև համաժամանակյա միջա-

¹⁰ **Խանգաղյան Է. Վ.**, Յայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 72:

գետքյան և փոքրասիական զարդարվեստում: Երեք ժապավենների հատումից առաջացած անկյունները լրացվել և զարդարվել են պարուրածն մեծ ու փոքր զարդանախշերով, որոնցից մեծ պարույրների թիվը 12-ն է, ընդ որում 12-ից 4-ը զույգ են, իսկ 4-ն՝ առանձին: Փոքր պարույրները թվով 24-ն են¹¹: Թափքի ետնամասի տախտակի աջ ներքնանասում երկկողմանի հավասարությամբ երկու սուրանկյուն նուրբ փորագրագծերով եռանկյուններ են, որոնց գագաթները հանդիպակաց նայում են իրար: Զարդանախշը կապված է ինչ-որ երևույթի հետ (*նկ. 2, բ:*):

Սա թվային խորհրդաբանության մի տեսակ է: Այս երևույթն առկա է նաև հայ արվեստի և զարդանկարչության միջնադարյան ստեղծագործություններում¹²: Ելնելով ծևավորման համասնությունից, մենք այն բացատրում ենք հետևյալ կերպ. գտնում ենք, որ 4 թիվը իմաստավորում է կամ տարվա չորս եղանակները, կամ աշխարհի չորս կողմերը, և չորս տարրերը՝ հոդը, ջուրը, օդը և հուրը, 12-ը՝ տարվա ամիսները, 24-ը՝ ենթադրաբար՝ օրվա տևական ժամերը: Սա կարծես ևս մեկ առեղծվածային զարդանախշի միջոցով իրականացված տոնարական հաշվարկ և փաստ է, որ Յայաստանի բնիկները ննան միջոցով էին հաշվարկ կատարում՝ տարվա եղանակներին՝ անասնապահությանը և երկրագործությանը առնչվող երևույթները¹³:

Ըստ Կ. Ավագյանի՝ «Յորինվածքն ամբողջության մեջ տպավորվում է որպես երկնային ոլորտ և հուշում հավերժի զաղափարը»¹⁴: Նկատենք նաև, որ պատրաստող վարպետի մոտ կատարելության է հասել փորագրազարդման արվեստը, նա հորինվածքը ազատել է ոչ հարկավոր հատվածներից, և ընդհանուր պատկերը թողել է հարթաքանդակի տպավորություն՝ ի դեմս զարդանախշի պատկերը մակերեսից 4-5 մմ բարձրությամբ ելուստածն վեր թողնելով:

Առանձին զարդածներ ենք նկատում վերոհիշյալ սայլի լծերի վրա, որոնք զարդարված են բրոնզե լայն ժապավեններով: Դրանք թե՛ ամրություն են տալիս լծանը, և թե՛ գեղեցկություն: Ընդհանրապես ննան զարդատեսակներ կան առանձին փայտե պատրաստուկների վրա, որպիսիք հանդիպում են նետ-աղեղների հորինվածքներում:

Սայլագործ վարպետները չեն բավարարվել սայլի թափքի տախտակները զարդանախշելով: Բացի դրանցից, սայլը զարդարվել է բրոնզե թռչնակերպ, կենդանակերպ արձանիկներով, որոնք ևս հարուստ են զարդատեսակներով և առանձին չուր են տալիս սայլին կամ ռազմակառքին, գեղեցիկ համադրությամբ լրացնելով փայտին (Լճաշենի դ 2-3, 9-11 դամբարաններից գտնված նյութեր): Բացի նշվածից, հանդիպում են մարտակառքեր, որոնց առեղներին դրվել են ռազմակառքի բրոնզե մողել: Մետաղի և փայտի համադրությունը ընդհանուր առնամբ այս դարաշրջանի համար բավական տարածված երևույթ է¹⁵:

¹¹ Ավետյան Վ. Վ., Սևանի ավագանի մշակույթը..., էջ 163:

¹² Ղազարյան Վ., Խորանների մեկնություններ, Երևան, 1995, էջ 17-19:


¹³ Խնկիկյան Օ. Ս., Առեղծվածային զարդանախշ, Յուշարձան, Երևան, 1993, էջ 128-133:

¹⁴ Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 68:

¹⁵ Տառյան Յ. Բ., Սимволы симметрии орнамента в Армянском прикладном искусстве, Ереван, 1989, с. 77.

Առանձին քննարկման հարց չենք դարձրել ռազմակառքի բրոնզե մոդելները, սակայն նշենք, որ մետաղագործ վարպետը բարձր ճաշակով և արվեստով է հորինել մոդելի մանրամասները (ռազմիկի սաղավարտը, գոտուց կախված դաշույնը, ճաղավոր անիվները), որոնք կատարելության աստիճանի են հասցված։ Այդ մոդելները «խոսուն» են բրոնզեդարյան փայտե մարտակառքերի, մարտիկի համազգեստի և ասպազենի մասին։

Քառանիվ մեկ այլ սայլ է գտնվել Լճաշենի N 11 դամբարանաբլուրից (**Նկ. 3**)։



Նկ. 3. Լճաշենի N 11 դամբարանի սայլի վերակազմությունը


Չունենալով ծածկով կամար, այս սայլի առջևի տախտակը նույնպես քանդակագրություն է, և ծախսից պատկերում է երկու ճյուղավորված եղջյուրներով եղջերուների (**Նկ. 4**)։ Վերջինս իր պատկերագրական առանձնահատկությամբ, ինչպես նշել ենք վերը, կապված է հին հավատալիքների հետ և խորհրդանշում է անտառի աստվածությունը։ Դա է վկայում եղջերուի բրոնզե արձանիկը, որը գտնվել է Լճաշենի N 3 դամբարանաբլուրից և ամրացված է եղել սայլի առջևի մասում կամ թափքի կենտրոնական մասում, կապված լինելով պաշտամունքային պատկերացումների հետ¹⁶։

Կ. Ավագյանը նկատում է, որ կենդանիները հավանաբար նախապես նրբագծվել են, ապա տարվել է ակոսագիծ փորագրությունը, հետագայում դրա սահմաններում կատարվել հարթեցում։ Մրա հիման վրա մասնագետը ենթադրում է, որ փայտի գեղարվեստական մշակման ասպարեզում երևան է գալիս փորագրագրուման ևս մի եղանակ¹⁷։ Ըստ նույն մասնագետի, եղջերվին տրվում է ինաստաբանական մեկ այլ մոտեցում, այն է եղջերուն համարվել է նաև տիեզերական

¹⁶ *Мицаканян А. О.*, Древние повозки, с. 149.

¹⁷ *Ավագյան Կ.*, նշվ. աշխ., էջ 72:

տարրերից մեկի՝ ջրի խորհրդանիշը¹⁸: Յամեմատաքար նուրբ և թույլ է արտահայտված մեկի գավակի, մյուսի՝ պարանոցից մինչև գավակ ձգվող մասերը: Ոիթմիկ հորինվածքային առումով թվում է, թե կենդանիները հանդարտ ընթացքի մեջ են: Մեկը ավելի ծիգ կեցվածքով է, քան մյուսը՝ պարանոցին պսակված հարուստ ճյուղավորմամբ եղջյուրներ:



Ակ. 4

Նույն սայլի թափքի ետևի տախտակը նույնպես քանդակազարդ է: Ներքեց առաջին տախտակի վրա պատկերված են երկու շրջանակներ, որոնք բաժանված են մեկ ուղղահայաց իջնող գոտով, որում պատկերված է գագաթներով իրար նայող միանման փոքրիկ եռանկյունների հավասար շարք, արանքում գոյացնելով նոր զարդարաշտ: Շրջանակները հիշեցնում են հավերժության խորհրդանիշ պատկերները՝ պտույտի պահին, որոնց մերհայաց կողմում հոսող գալար է՝ փակված ավելի փոքր շրջանագծով: Եռաշին շրջանագիծ գալարների թիվը 10 է, մյուսինը՝ 11: Այստեղ դարձյալ հանդիպում ենք խորհրդանշական 21 թվին: Կ. Ավագյանի կարծիքով, այս նախշերը հիշեցնում են ակնաբիր երկնային ոլորտի համակարգում, և հավանաբար լուսատուներ կամ աստղիկներ են¹⁹:

Ներքեց երկրորդ տախտակի նախշը հիշեցնում է հակառակ կողմերով իրար միացված կեռիկների, որոնց դաշտը զարդարված է նուրբ փորագրագծերով, վերջիններիս վերին դաշտում առաջացնելով եռանկյուններ: Երրորդ տախտակի վրա նկատելի են կիսաշրջանազարդեր և եղևնազարդեր (եռանկյունանման):

Դենց վերոհիշյալ N 9 դամբարանի քառանիվ սայլի առաջանասի տախտակի վրա քանդակված գալարազարդանախշերի նմանությամբ է զարդարված Ներքին Արիանանի N 17 կուրգանից երվ. Լալայանի հայտնաբերած «իշխանական» կոչված սայլը²⁰: Նախշերը արված են փորագրելով: Զարդանկարի կենտրոնում

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 73:

²⁰ **Լալայան Երվ.**, Դամբանների պեղումները..., էջ 194-198, նկ. 194, 196:

խաչապատկեր զարդանկար է՝ ընդգծված նուրբ գծով, որը գտնվում է երկրս ճյուղավորված վարդյակի մեջ՝ ինչը հավանաբար հավերժի և արևի խորհրդանիշն է (**Նկ. 5**):



Նկ. 5. Ե. Լալայանի պեղած «Իշխանական» սայլի խաչապատկեր վարդյակը

Մյուսների նման այս սայլի վրա ամրացված է եղել այժի զանգակ արձանիկ՝ ծայնով չարքերին վանելու նպատակով:

Լճաշենյան սայլերը ինքնատիպ և հարուստ են զարդանախշման արվեստով, կատարման վարպետությամբ և նրբությամբ: Նախշազարդերի մեջ հանդիպում են պարույրներ, գծեր, վարդյակներ, եռանկյուններ: Փայտի վրա արված աշխատանքը համաչափ է, որի կատարումը անհնար է առանց գծագրի և չափումների²¹: Նախօրոք գծագրվել է նախշազարդը, հետո փորագրվել, որից հետո անհարթությունը վերացվել է տաքացված մետաղյա գործիքով կամ քարով²²: Ենթադրվում է, որ եթե անզարդ սայլի պատրաստման համար պահանջվել է 15-20 օր, ապա զարդանախշման դեպքում՝ 50-60 օր²³:

Փայտագործության արվեստը, մանավանդ սայլերի պատրաստումը, մարդկային աշխատանքի հսկայական փորձի արդյունք է: Փաստելով սայլագործական արվեստի մասնագիտական հմտությունը, լճաշենյան սայլերը ակնհայտորեն ի ցույց են հանում այս արվեստի հետ կապված ողջ արտահայտչականությունը և էսթետիկ երանգը:

²¹ **Խնկիկյան Օ. Ս.**, Արհեստները բրոնզեդարյան Յայաստանում, Երևան, 1977, էջ 69:

²² Նույն տեղում:

²³ Նշվ. աշխ., էջ 71:

Պեղումների ժամանակ հասկանալի պատճառներով քիչ են հայտնաբերվում փայտե առարկաներ, բայց փաստ է, որ այն բրոնզի դարաշրջանում լայն կիրառություն է ունեցել մարդու կենցաղում: Փայտից պատրաստել են սայլեր ու ռազմակառքեր, թաղման սովորույթների հետ կապված առարկաներ՝ դիապահանակներ, նաև գդալ, շերեփ, տուփեր, բաժակ, դույլեր, քրեղան, աղաման, մատուցարան, բազկաթոռ, սեղան, վահան, լանջապանակ, դիակառք, որոնցից շատերի վրա կարելի է նկատել նույր ու հմտությամբ արված նախշազարդեր: Դրանք մշակվել են մեծ խնամքով: Վերջիններիս ակունքները գալիս են ավելի վաղ ժամանակներից՝ մ.թ.ա. XVI-XV դարերից, լայն տարածման և կատարելության են հասել ուշ բրոնզի դարաշրջանում (XV-XIII դ.) և հարատևել մինչև մեր օրերը:

Փայտամշակությունը նպաստել է քանդակագործության արվեստի զարգացմանը, և քննարկված նյութում նկատելի են այն զարդամոտիվները, որոնք կիրառություն են ունեցել ոչ միայն փայտագործության մեջ, այլև խեցեգործության և մետաղամշակության բնագավառում: Փայտագործության մեջ կիրառվել են վարդյակներ, երկրաչափական բնույթի զարդանախշեր, պարույրներ, գծագրեր, եռանկյուններ, եղևնազարդեր, կենդանական բնույթի զարդանախշեր: Սրանցից շատերը ներկայանում են ձևերի ու կատարման տեխնիկայի բազմազանությամբ՝ հանդիսանալով ուսումնասիրության մի առանձին թեմա: Վերոհիշյալ զարդաձևերն արվեստի այս ճյուղում՝ ընդհանրություններ ունեն Յայկական լեռնաշխարհի համաժամանակյա մշակույթի զարդարվեստի հետ:

ТЫСЯЧЕЛЕТНЕЕ ДЕРЕВООБРАБАТЫВАЮЩЕЕ ИСКУССТВО СЕВАНСКОГО БАССЕЙНА

M. C. Կեշիշյան

Статья посвящена исследованию деревообрабатывавшему искусству.

Деревообрабатывающая отрасль в поздний бронзовый век (XV-XIII вв. до н.э.) являлась одной из развитых ремесел аборигенов Севанского бассейна, о чем свидетельствуют как раскопки древних поселений бассейна, так и найденные во время раскопок в Лчашене разнообразные предметы из дерева, в особенности двух и четырехколесные повозки и колесницы, на которых сделаны разные спиралевидные, треуголевидные, менандровидные, а также зооморфные орнаменты, орнаменты, символизирующие солнце, которые также использовались в керамической и металлообрабатывающей сфере.

MILLENNIUM WOODS CARDECORATION ART IN SEVAN BASIN

M. S. Keshishyan

In the late bronze age the cultivation of wood was one of the developed arts of the natives of the Sevan basin. The witness are the different wooden thinks especially the two-wheeled and four-wheeled carts and fight carriages which have different decorations: triangles, symbolic pictures of sun, animals shaped decoration which were used also in the spheres of ceramics and metallurgy.